Տպագրված է 2 օրինակից
Օրինակ 1

Հաստատված է՝
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ
հակակոռուպցիոն
կենտրոն» հասարակական
կազմակերպության
հերթական Ընդհանուր ժողովի կողմից

25-ը օգոստոսի 2017թ.

Գործադիր տնօրեն՝

Սոնա Այվազյան

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի
N953 հրամանով, 21-ը օգոստոսի, 2000թ.
ՀՎՀՀ 00063072

Փոփոխություններով խմբագրված
կանոնադրությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարի N1000
հրամանով, 18-ը սեպտեմբերի, 2000թ.

Գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից 17-ը ապրիլի, 2003թ.
Գրանցման համար՝ N211.171.01741
Վկայական՝ N 03Ա-060363

Նոր խմբագրությամբ կանոնադրությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից 21-ը փետրվարի, 2006թ.

21-ը փետրվարի 2006թ.գրանցված
կանոնադրության թիվ 1-2 փոփոխությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 11-ը փետրվարի 2008թ.

11-ը փետրվարի 2008թ. գրանցված
կանոնադրության թիվ 1-2 փոփոխությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից,11-ը մայիսի, 2009թ.

11-ը մայիսի 2009թ. գրանցված
կանոնադրության թիվ 1-2 փոփոխությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից,18-ը սեպտեմբերի 2012թ.

18-ը սեպտեմբերի 2012թ. գրանցված
կանոնադրության թիվ 1-2 փոփոխությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

«31» 10 2017թ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
հասարակական կազմակերպության
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)
2017

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ չհետապնդող հասարակական միավորում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության (հետայսու՝ ՀՀ)Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն:

1.2 Կազմակերպությունը գործում է օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, կամավորության, թափանցիկության, հրապարակայնության, ինքնակառավարման և հաշվետվողականության սկզբունքներով:

1.3 Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության անվանումն է հայերեն՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն (հապավում «ԹԻՀԿ» ՀԿ),ռուսերեն՝ "Антикоррупционный центр Транспаренси Интернешнл" общественная организация (հապավում "АЦТИ" ОО),անգլերեն՝ "Transparency International Anticorruption Center" public organization (հապավում "TIAC" PO).

1.6 Կազմակերպության խորհրդանիշն իրենից ներկայացնում է մուգ կապույտ գույնի երկրագնդի պատկեր, որի վրա պատկերված են հատվող զրոյական միջօրեականը և հասարակածը, որոնք ձևավորում են լատինատառ «T» մեծատառը: Հատման կետից ներքևի աջ հարթությունում միջօրեականին զուգահեռ գծված է ուղիղ գիծ, որը ձևավորում է լատինատառ «i» փոքրատառի ուղղահայաց մասը, իսկ հասարակածի վերևի հարթությունում այդ տառի «գլխիկը» կետի տեսքով՝ համաձայն սույն Կանոնադրության հավելվածի:

1.7 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ և այլ հաշիվներ բանկերում ՀՀ դրամով և օտարերկրյա արժույթներով, հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով:

1.8 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կենտրոն համայնք, Սարյան փողոց, շենք 12, բնակարան 11 և 12 հասցե:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կազմակերպության նպատակն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

2.2 Կազմակերպության խնդիրներն են՝

1) աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը,

2) նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը,
3) աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը,
4) խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:

2.3 Կազմակերպության գործունեությունն ընդգրկում է՝
1) քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում, հանրային քաղաքականության մոնիտորինգ և գնահատում.
2) ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ հասարակական վերահսկողության, այդ թվում դիտորդական առաքելության իրականացում.
3) հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկում, իրավագիտակցության բարձրացում և մասնակցային կարողությունների զարգացում.
4) համակարգային բնույթի բարեփոխումների վերաբերյալ առաջարկների մշակում և ջատագովության, այդ թվում հասարակության մոբիլիզացիայի, քարոզչության և լոբբինգի իրականացում.
5) կոռուպցիոն երևույթների առնչությամբ մասնագիտական, այդ թվում իրավաբանական աջակցության տրամադրում շահագրգիռ կողմերին՝ պետական կառույցներին, մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչներին.
6) իր և իր անդամների, կազմակերպության շահառուների, կամավորների, ինչպես նաև կազմակերպության նպատակների շրջանակներում հանրության և/կամ այլոց իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ընդհուպ՝ խախտված իրավունքների պաշտպանություն դատարանում:

2.4 Կազմակերպությունն իր նպատակներին համապատասխան իրավունք ունի՝
1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.
2) իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից.
3) իր աշխատանքներում ներգրավել կամավորներ.
4) իր նպատակներին համապատասխան ունենալ շահառուներ: Կազմակերպության շահառուներն են այն իրավաբանական կամ ֆիզիկական անձինք կամ անձանց խմբերը, ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը.
5) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություններ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

3.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության անդամների Ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), Խորհուրդը և Գործադիր տնօրենը:

3.2 Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը Կազմակերպության Ընդհանուր ժողովն է:

3.3 Կազմակերպության ընթացիկ կառավարման կոլեգիալ մարմինը Կազմակերպության Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության Գործադիր տնօրենն է (այսուհետ՝ Գործադիր տնօրեն):

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

4.1 Հերթական Ընդհանուր ժողովը գումարվում է Խորհրդի կողմից տարին մեկ անգամ: Արտահերթ Ընդհանուր ժողով կարող է հրավիրվել Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի, Խորհրդի կամ Գործադիր տնօրենի գրավոր նախաձեռնությամբ:

4.2 Ընդհանուր ժողովը գումարվում է մասնակիցների կամ պատվիրակների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.3 Ընդհանուր ժողովի օրակարգի, անցկացման վայրի, օրվա ու ժամի մասին Կազմակերպության անդամները ծանուցվում են հեռահաղորդակցության միջոցներով՝ Ընդհանուր Ժողովի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

4.4 Արտահերթ Ընդհանուր Ժողովը գումարվում է նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում, եթե նախաձեռնողի կողմից չի առաջարկվել ավելի երկար այլ ժամկետ: Արտահերթ Ընդհանուր Ժողովի օրակարգի, անցկացման վայրի, օրվա ու ժամի մասին Կազմակերպության անդամները ծանուցվում են հեռահաղորդակցության միջոցներով՝ Ընդհանուր Ժողովի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 3օր առաջ:

4.5 Ընդհանուր Ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին՝ առկա կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.6 Ընդհանուր Ժողովը որոշումներն ընդունում է Ընդհանուր Ժողովին ներկա անդամների (պատվիրակների) ձայների պարզ մեծամասնությամբ:

4.7 Եթե Ընդհանուր Ժողովում քննարկվում է Կազմակերպության որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

4.8 Ընդհանուր Ժողովն իրավասու է՝

1) կատարելու Կազմակերպության կանոնադրության փոփոխություններ և լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.
2) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.

3) Ընդունելու որոշումներ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.
4) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.
5) ընդունելու որոշում Գործադիր տնօրենի ընտրության և նրա լիազորությունների դադարեցման վերաբերյալ.
6) ընդունելու որոշումներ Կազմակերպության Խորհրդի և Էթիկայի հանձնաժողովի կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.
7) սահմանելու Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրության կարգը և պայմանները՝ վարձատրություն նախատեսված լինելու դեպքում.
8) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է 5 միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով.
9) դադարեցնելու Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.
10) ընդունելու որոշում Կազմակերպության անդամակցության և անդամակցության դադարեցման, այդ թվում՝ հեռացման վերաբերյալ.
11) հաստատելու Կազմակերպության գործունեության ռազմավարությունը.
12) հաստատելու Կազմակերպության Վարքագծի կանոնները.
13) հաստատելու Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ Գործադիր տնօրենի հաշվետվությունը՝ տարեկան կտրվածքով.
14) Հաստատելու Կազմակերպության անդամավճարների չափը և վճարման կարգը.
15) ընդունելու որոշումներ Կազմակերպության վերակազմակերպման ու լուծարման մասին.
16) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4.9 Ընդհանուր Ժողովը վարում է Խորհրդի նախագահը, վերջինիս բացակայության դեպքում Խորհրդի անդամներից որևէ մեկը՝ Խորհրդի որոշմամբ:

4.10 Ընդհանուր Ժողովի արձանագրությունն ստորագրում են Ընդհանուր Ժողովի նախագահողը և քարտուղարը: Ընդհանուր Ժողովի արձանագրությունները պահպանվում են առնվազն տասը տարի:

5. ԽՈՐՀՈՒՐԴ

5.1 Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը Խորհուրդն է, որը կառավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը Ընդհանուր Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում: Խորհուրդը ձևավորվում է Ընդհանուր Ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով և գործում է հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների թիվը սահմանում է Ընդհանուր Ժողովը՝ նվազագույնը հինգ, առավելագույնը՝ ինը անդամի կազմով՝ կենտ թվով:

5.2 Խորհրդի անդամ կարող է ընտրվել Կազմակերպությանն առնվազն երկու տարի անդամակցող անձը, որն ընդգրկված չէ Ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող

կառավարման մարմիններում և Կազմակերպության աշխատակազմում, ինչպես նաև որևէ կուսակցության ընտրողի/նշանակողի ղեկավար մարմիններում: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում ընտրված է համարվում առավել շատ ձայներ հավաքած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի կազմում: Եթե Խորհրդում միևնույն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամների թիվը գերազանցում է Խորհրդի կազմի մեկ երրորդը, ապա ընտրված է համարվում տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն(երը), իսկ մյուս թեկնածուն(երը) Խորհրդում իրենց տեղը զիջում են քվեարկության արդյունքներով առավել շատ ձայներ հավաքած՝ ոչ նույն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հաջորդ թեկնածու(ներ)ին:

5.3 Խորհուրդն իր կազմից ընտրում է Խորհրդի նախագահ՝ երեք տարի ժամկետով: Խորհրդի նախագահի թափուր պաշտոնը համալրվում է 30-օրյա ժամկետում: Խորհրդի նախագահը հանդես է գալիս Խորհրդի անունից՝ Գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս:

5.4 Խորհրդի անդամների ֆինանսական և այլ շահերը հայտարարագրվում և տեղադրվում են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ տարեկան մեկ անգամ թարմացմամբ:

5.5 Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա ընտրության օրվան հաջորդող 3-րդ տարվա նույն օրը:

5.6 Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե՝

1) նա հրաժարականի մասին գրավոր դիմում է ներկայացրել.
2) նա՝դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.
3) նա երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է Խորհրդի նիստերից.
4) ի հայտ են եկել փաստեր, որ ընտրվելու պահին նա չի համապատասխանել ներկայացվող պահանջներին.
5) Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է նրա կողմից Կազմակերպության Վարքագծի կանոնները խախտելու կամ շահերի բախման վիճակում գտնվելու փաստը.
6) նա մահացել է:

Սույն կետով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին Ընդհանուր ժողովն ընդունում է որոշում, բացառությամբ 1-ին ենթակետով սահմանված դեպքի: Հրաժարականի մասին Խորհրդի անդամի գրավոր դիմումը Ընդհանուր ժողովն ընդունում է ի գիտություն, և նրա լիազորությունները համարվում են դադարեցված:

5.7 Սույն կանոնադրության 5.6-րդ կետի 3-4-րդ ենթակետերով սահմանված արարք կատարելիս Խորհրդի անդամը Խորհրդի գրավոր պահանջով ներկայացնում է գրավոր բացատրություն: Եթե Խորհրդի սահմանած ժամկետում Խորհրդի անդամն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա լիազորությունների դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել առանց բացատրության, ինչը, սակայն, չի սահմանափակում Ընդհանուր Ժողովում հարցի վերաբերյալ Խորհրդի տվյալ անդամի՝ կարծիք արտահայտելու իրավունքը:

5.8 Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումն ընդունում է Ընդհանուր Ժողովը: Խորհրդի անդամի թափուր տեղը համալրվում է 30-օրյա ժամկետում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

5.9 Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից՝ Կազմակերպության աշխատակազմի աջակցությամբ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի կամ Գործադիր տնօրենի նախաձեռնությամբ:

5.10 Խորհրդի նիստի օրակարգի, անցկացման վայրի, օրվա ու ժամի մասին Խորհրդի անդամները, ինչպես նաև Կազմակերպության անդամները և աշխատակազմը ծանուցվում են հեռահաղորդակցության միջոցներով, նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ: Արտահերթ նիստերի վերաբերյալ ծանուցումը տրվում է նիստից առնվազն 3 օր առաջ:
5.11 Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան ֆիզիկապես կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, իսկ վերջինիս բացակայության կամ այդ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ Խորհրդի որևէ անդամ՝ Խորհրդի որոշմամբ: Խորհրդի նիստերը բաց են Կազմակերպության անդամների և աշխատակազմի համար:

5.12 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

5.13 Խորհրդն իրավասու է՝

1) գումարելու Ընդհանուր Ժողով, սահմանելու դրա օրակարգը և գումարման կարգը.
2) ներկայացնելու առաջարկություններ Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.
3) հավանության արժանացնելու Կազմակերպության ռազմավարությունը և այն ներկայացնելու Ընդհանուր Ժողովի հաստատմանը.
4) հաստատելու Կազմակերպության աշխատակազմի կառուցվածքը.
5) հաստատելու Կազմակերպության ռազմավարական բնույթի և/կամ գործունեության ուղղությունները կանոնակարգող ներքին փաստաթղթերը (քաղաքականությունները).
6) հաստատելու Խորհրդի և Գործադիր տնօրենի գործունեությունը և փոխհարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերը.
7) ի գիտություն ընդունելու Գործադիր տնօրենի ներկայացրած տեղեկատվությունը Կազմակերպության ընթացիկ գործունեության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ.
8) հավանության արժանացնելու Կազմակերպության անդամավճարի չափն ու գանձման կարգը և այն ներկայացնելու Ընդհանուր Ժողովի հաստատմանը.
9) սահմանելու Կազմակերպության ծառայություններից Կազմակերպության անդամների օգտվելու դեպքերն ու կարգը.
10) լուծելու ցանկացած այլ հարց, բացառությամբ Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը և Գործադիր տնօրենին վերապահված հարցերի:

5.14 Եթե Խորհրդում քննարկվում է Խորհրդի անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր)

գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

5.15 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են Խորհրդի նախագահը (կամ նախագահողը) և քարտուղարը: Խորհրդի նիստերի արձանագրությունները պահպանվում են առնվազն տասը տարի:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

6.1 Կազմակերպության առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված ամենօրյա գործունեությունը համակարգում է Գործադիր տնօրենը, որն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից:

6.2 Գործադիր տնօրենը՝

1) կազմակերպում և իրականացնում է Կազմակերպության ամենօրյա ընթացիկ գործունեության ղեկավարում.
2) ապահովում է Ընդհանուր Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը.
3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
4) առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխհարաբերություններում.
5) տնօրինում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը՝ այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.
6) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում արտարժութային) և այլ հաշիվներ.
7) հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
8) կնքում է աշխատանքային, ծառայությունների մատուցման և այլ պայմանագրեր.
9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ և վերահսկում է դրանց կատարումը.
10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
11) տալիս է լիազորագրեր.
12) հաստատում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը կանոնակարգող, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.
13) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները.
14) իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարմանն ուղղված այլ գործառույթներ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր Ժողովի և Խորհրդի իրավասության հարցերի:

6.3 Գործադիր տնօրենը կարող է իրեն վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու համար աշխատանքի ընդունել համապատասխան աշխատակազմ, որի կառուցվածքը հաստատում է Խորհուրդը՝ սույն կանոնադրության 5.13 կետի համաձայն:

7.ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

7.1 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Ընդհանուր Ժողովը:

7.2 Կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով կարող է պատվիրել արտաքին աուդիտ:

8. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

8.1 Կազմակերպության անդամների կողմից Կազմակերպության հաստատած Վարքագծի կանոնների պահպանման և շահերի բախման նկատմամբ հսկողությունն իրականացնում է մշտապես գործող էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

8.2 Հանձնաժողովը ձևավորվում է Ընդհանուր Ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով: Հանձնաժողովը կազմված է երեք անդամից՝ նախագահ և երկու անդամ, որոնցից մեկը պարտադիր պետք է լինի Կազմակերպության աշխատակազմից:Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովն իր կազմից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ:

8.3 Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել Կազմակերպությանը առնվազն երկու տարի անդամակցող անձը, որն ընդգրկված չէ Կազմակերպության Խորհրդի կազմում: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում ընտրված է համարվում առավել շատ ձայներ հավաքած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն:

8.4 Կազմակերպության անդամների կողմից Վարքագծի կանոնների խախտման և/կամ շահերի բախման վերաբերյալ Հանձնաժողովը, իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան, հրավիրում է նիստեր Կազմակերպության և/կամ աշխատակազմի ցանկացած անդամի գրավոր դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

8.5 Հանձնաժողովը հարցի քննության արդյունքում կայացնում է որոշում Կազմակերպության անդամի կողմից Վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու փաստի առկայության կամ բացակայության մասին:

8.6 Հանձնաժողովի որոշումը 3-օրյա ժամկետում ուղարկվում է Խորհրդին, Գործադիր տնօրենին, Կազմակերպության դիմումատու անդամին և շահագրգիռ անձանց:

8.7 Եթե Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է Կազմակերպության անդամի կողմից Վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու փաստը, ապա Խորհուրդը առաջիկա նիստի օրակարգում ընդգրկում է տվյալ անդամի պատասխանատվության հարցը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք, ով կիսում է Կազմակերպության արժեքներն ու կանոնադրական նպատակները և ցանկանում է մասնակցել Կազմակերպության գործունեությանը:

9.2 Կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ որոշումը կայացվում է Ընդհանուր Ժողովի կողմից՝ անդամակցել ցանկացող անձի՝ Խորհրդին ուղղված գրավոր դիմումի և Կազմակերպության առնվազն երկու անդամի գրավոր երաշխավորության հիման վրա:

9.3 Կազմակերպության անդամի անդամությունը դադարում է, եթե՝

1) նա անդամությունը դադարեցնելու մասին գրավոր դիմում է ներկայացրել.
2) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.
3) առանց հարգելի պատճառի երկու անգամ անընդմեջ չի մասնակցել Ընդհանուր ժողովին.
4) ի հայտ են եկել փաստեր, որ անդամակցելու պահին նա չի համապատասխանել ներկայացվող պահանջներին.
5) երկու և ավելի անգամ սահմանված կարգով և չափով չի վճարել անդամավճարը.
6) Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է նրա կողմից Կազմակերպության Վարքագծի կանոնները խախտելու կամ շահերի բախման վիճակում գտնվելու փաստը.
7) նա մահացել է:

Սույն կետով նախատեսված դեպքերում անդամությունը դադարեցնելու մասին Ընդհանուր ժողովն ընդունում է որոշում, բացառությամբ 1-ին ենթակետով սահմանված դեպքի: Անդամությունը դադարեցնելու մասին Կազմակերպության անդամի գրավոր դիմումն Ընդհանուր ժողովն ընդունում է ի գիտություն, և անդամությունը համարվում է դադարեցված:

9.4 Սույն կանոնադրության 9.3-րդ կետի 3-5-րդ ենթակետերով սահմանված արարք կատարելիս Կազմակերպության անդամը Խորհրդի գրավոր պահանջով ներկայացնում է գրավոր բացատրություն: Եթե Խորհրդի սահմանած ժամկետում Կազմակերպության անդամն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա լիազորությունների դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել առանց բացատրության, ինչը, սակայն, չի սահմանափակում Ընդհանուր Ժողովում հարցի վերաբերյալ տվյալ անդամի՝ կարծիք արտահայտելու իրավունքը:

9.5 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում.
2) ներկա լինելու Ընդհանուր Ժողովին անձամբ կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.
3) պահանջելու և ստանալու Կազմակերպությունից տեղեկություններ, փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած աուդիտորի եզրակացության պատճենները, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.
4) ներկայացնելու առաջարկություններ կառավարման մարմիններին՝ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով.

5) ներկայացնելու դիմումներ Էթիկայի հանձնաժողովին՝ Կազմակերպության Վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման հետ կապված հարցերով.
6) մասնակցելու Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին.
7) անվճար օգտվելու Կազմակերպության ծառայություններից՝ Խորհրդի կողմից սահմանած դեպքերում և կարգով.
8) բողոքարկելու Խորհրդի և Գործադիր տնօրենի որոշումները Ընդհանուր Ժողովին՝ երկամսյա ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին.
9) դադարեցնելու անդամակցությունը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Խորհրդին:

9.6 Կազմակերպության անդամը պարտավոր է՝
1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.
2) մասնակցել Ընդհանուր Ժողովին, իսկ Խորհրդի անդամ լինելու դեպքում՝ նաև Խորհրդի նիստերին.
3) պահպանել Կազմակերպության հաստատած Վարքագծի կանոնները.
4) բարեխղճորեն կատարել Խորհրդի որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.
5) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար.
6) սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում Խորհրդի պահանջով և վերջինիս սահմանված ժամկետում ներկայացնել գրավոր բացատրություն.
7) վճարել անդամավճար՝ սահմանված չափով և կարգով:

9.7 Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտող անդամի նկատմամբ Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող են կիրառվել կարգապահական միջոցներ՝ ընդհուպ մինչև Կազմակերպության անդամությունից հեռացումը:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10.1 Կազմակերպության կառավարման մարմինների որոշումները կարող են բողոքարկվել Կազմակերպության անդամների կողմից համապատասխան որոշումն ընդունող մարմնի վերադաս մարմիններում:

10.2 Կազմակերպության կառավարման մարմինների՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Կազմակերպությունը, որպես սեփականություն կարող է ունենալ շենք, շինություններ, բնակարաններ, տրանսպորտային միջոցներ և օրենսդրությամբ չարգելված այլ գույք:

11.2 Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր են՝

1) անդամների ներդրումները.
2) անդամավճարները.
3) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.
4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները.
5) դրամական մուտքերը պետական բյուջեից.
6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները.
7) հանգանակությունները.
8) օրենքով չարգելված այլ միջոցներ:

11.3 Կազմակերպության գույքը և միջոցները օգտագործվում են բացառապես Կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման համար:

11.4 Կազմակերպության անդամները Կազմակերպությանը, որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր անդամների պարտավորությունների համար:

12. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ օրենքով սահմանված կարգով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

12.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ:

12.3 Կազմակերպության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո հինգ օրվա ընթացքում Ընդհանուր Ժողովը այդ մասին հայտնում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ լուծարման գործընթացում գտնվելու մասին պետական գրանցամատյանում գրառում կատարելու համար:

12.4 Կազմակերպության լուծարման դեպքում Ընդհանուր Ժողովը ստեղծում է լուծարային հանձնաժողով, որը Կազմակերպության պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո Կազմակերպության մնացած գույքը օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրագործման համար, իսկ եթե անհնար է՝ փոխանցում է պետական բյուջե:

12.5 Կազմակերպության լուծարմամբ դրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության սկզբունքով այլ անձանց անցնելու:

ՀԱՎԵԼՎԱԾ

Գլուխ 5
13 (տասներեք) էջ

Ցանցային տեղեկություն
Ներքին հիշողության